

ԲԱԳՈՒՆՆ.

Քաղցր պարտը եմ համարում հաղորդել Ձեր յարգելի Խմբագրութեան միջնորդութեամբ արև եղև լուծեան մասին, որ կատարվում է Բազու քաղաքում:

Արժ. Խորեն վարդապետ Ստեփանէն, որի եռանդուն աշխատասիրութիւնը ուսումնարանական ասպարէզում արդէն յայտնի է, իւր օգտաւէտ ընդունակութիւնները այստեղ եւս արտայայտեց եւ քաղաքական զարկ տուեց այստեղի հասարակութեան: Այս լոկ իօսքեր չեն, այլ փաստեր: Նա բարեկարգեց ուսումնարաններ նոր մանկավարժական կանոններ մտցնելով նոցա մէջ եւ նոյնպէս եկեղեցին աւելի պայծառացաւ Բարեկրօն թաղէոս աւագ քահանայ Բուդաղեանի գործակցութեամբ, թէ նոր կանոնաւոր ծայնագրական ներկայաշնակ ժամատացութեամբ եւ թէ իւր ազդու եւ իմաստնալից քարոզներով: Ահա եւ այդ քարոզների ազդեցութեամբ թէ անցեալ տարի Ջատկի տօնին եւ թէ այս տարի Ջորոհնեաց տօնին մեծ նուիրաբերութիւններ եղաւ հասարակութեան կողմից: Մարդասիրական ընկերութեան զահլիճում Արժ. Խորեն վարդապետը իրենէ հոգեւորականութեան ներկայացուցիչ մեծածախ սեղան ունէր պատրաստած, որտեղ եւ հասարակութիւն ժողովուել էր, եւ սկսեցին նուիրաբերութիւններ անել, որից գոյացաւ մօտ 2000 թ. գումար տեղական ծխական ուսումնարանի օգտին: Իսկ հասարակութիւնը իւր համակրութիւնը ցոյց տալու համար Ստեփանէ վարդապետի գործունէութեան մասին, որ զգալի կերպով ապացուցվեց փետրվարի 21ին եղած մանկական թատրոնում, որտեղ երկսեռ ուսումնարանների աշակերտները Հայերէն եւ Ռուսերէն թատրոն ներկայացրին շատ զեղեցիկ ձեւով, օրիորդական ուսումնարանի հոգաբարձուհիների աշխատութեամբ պատրաստած ծառահանդէսում (), քաղմաթիւ Հայ հասարակութեան առաջեւ, որն եւ ահա ի պատիւ Արժանապատիւ Վարդապետի նոյն փետրվարի 23ին. մեծածախ ճաշ էր պատրաստել: Մարդ. Ընկ. զահլիճը

Վարդանանց յիշատակիլի տօնին առանձին ձեւ էր ստացել: 100 մարդից աւել կային, նոյնպէս եւ ներկայ էին հոգաբարձուհիներ: Այս զեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Ներկաշնակ երաժշտութիւնն շատ զգալի էր, մի կողմից աշակերտների երգերը, միւս կողմից ամբողջ Հայ հասարակութիւն, պատուէր արժանապէս այն անձը՝ որ իւրեան բոլորովին նուիրած է եւ այսպէս ծառայում է ազգին: Ճաշին ի հարկէ բաժակներ առաջարկուեցան թաղաւոր Կայսեր եւ Վեհափառ Կաթողիկոսի կենացը համար: Վերջը հասարակութիւնը առանձնապէս կամենալով անմոռանալի թողել իւր համակրութիւնը, յայտնեց որ կամենում է Խորեն վարդապետի համար եկեղեցական զգեստ բերել տայ, որի համար իսկոյն ստորագրութիւն բացուելով հաւաքուեց 400 թ. եւ արդէն սորա մասին գրուած է Մոսկվա: Այստեղ Խորեն Վարդապետ՝ իւր շնորհակալութիւնը յայտնելով հասարակութեան, ասեց որ այն պատիւը որ տալիս են իւրան՝ եթէ տակաւին չէ արժանացել, իւր վերայ պարտք է դնում որ հասարակութեան առաջեւ աւելի իւրան արգարացնէ:

Իսկ ինչ որ վերաբերում է Մարդասիրական Ընկերութեան յառաջադիմութեան, որի մասին Թիֆլիզի Հայ լրագիրներ սխալ տեղեկութիւններ են հրատարակում, պէտք է ասել որ շատ արագ քայլով է յառաջադիմում Արժ. Խորեն վարդապետի այստեղ զալուց յետոյ՝ Մարդ. Ընկ. յարգելի նախագահ Գ Մամիկոնեանի եւ անդամների մասնակցութեամբ եւ ջանիւր: Եւ եթէ մինչեւ այժմ ճշմարիտ է որ նորա գործերը մի կերպ խելումունչ ձեւով են վարվել, դորա մեղքը հասարակութեանն է, որ իւրան միշտ հեռու է պահել, իսկ այժմ ճանաչելով իւր սխալները՝ նա եւս կամենում է մասնակցել նորա գործունէութեան:

Մ. Կ.

Ի 29 Ն Փետրվարի 1878,

Ի Բագու: